ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆ ԳԱՐԻԿ ԳԱԼԻԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով քաղաքացի Նելլի Միքայելյանի 22.09.2016թ. դիմումի (մուտք №1706-16), ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցի հրապարակման հիման վրա փաստաբան Գարիկ Գալիկյանի (արտոնագիր թիվ 644) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

1. <u>Դիմումի և զանգվածային լրատվամիջոցի հրապարակման համառոտ բովանդակությունը.</u>

Քաղաքացի Նելլի Միքայելյանը (**այսուհետ նաև Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ Պալատ**)՝ հայտնել է, որ «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի՝ սույն թվականի հուլիսի 11-ին «Խճճված զուգահեռներ» վերնագրով հաղորդման մեջ փաստաբան Գարիկ Գալիկյանը անեծքներ է տվել քաղաքացուն՝ ասելով. *«արգանդդ չորանա...»*:

Դիմողը նաև նշել է, որ նա փաստաբանների գործողությունների տուժած քաղաքացի է և որոշել է պայքարել անբարեխիղճ փաստաբանների դեմ:

Վերը նշած դիմումին հաջորդել է www.hraparak.am լրատվական կայքում 2016թ. սեպտեմբերի 27-ին ***«Եթե անգամ լիցենզիայից էլ զրկեն, այդ էժանագին քայլերով չեն կարող իմ մարդ տեսակը փոխել. Գարիկ Գալիկյան»*** վերտառությամբ նյութի (**այսուհետ՝ Հրապարակում**)[1] հրապարակումը, որում մասնավորապես, ասվել է. *«Փաստաբան Գարիկ Գալիկյանի նկատմամբ հասունանում է նոր կարգապահական վարույթ: Քաղաքացիներից մեկը՝ Նելլի Միքայելյանը, դիմել է Փաստաբանների պալատ՝ նշելով, որ Գալիկյանը «Կիսաբաց Լուսամուտներ» հաղորդաշարի «Խճճված զուգահեռներ» խորագրով հաղորդման ժամանակ մասնակիցներից մեկին անեծքներ է տվել՝ ասելով «արգանդդ չորանա»: «Ինքս փաստաբանների գործողություններից տուժած քաղաքացի եմ և որոշել եմ պայքարել այդպիսի անբարեխիղճ փաստաբանների դեմ: Ուստի, խնդրում եմ, Գալիկյանի նկատմամբ հրապարակային պատիժ կիրառել՝ զրկել լիցենզիայից և չթույլատրել փչացնել քաղաքացիների կյանքը»: Գարիկ Գալիկյանը Hraparak.am-ի հետ զրույցում ասաց, որ եթե անգամ լիցենզիայից էլ փորձեն զրկել, միևնույն է, այդ էժանագին քայլերով չեն կարող իր մարդ տեսակը փոխել. «Ես այնտեղ նստած եմ եղել որպես փորձագետ, ասել եմ մի մարդու՝ արգանդդ չորանա, որ այլևս երեխա*

[1] http://hraparak.am/?p=124627&l=am%2Fete+angam+licenziayic+el+zrken+ayd+eganagin+qaylerov+chen+karox+im+mard+tesaky+poxel+garik+galikyan

լույս աշխարհ չբերես ու չկործանես, վեց երեխու կյանք ես կործանել, դրանից հետո էլի՞ պետք ա կործանես: .....»:

2. <u>Փաստաբան Գարիկ Գալիկյանի դիրքորոշումը</u>.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբան Գարիկ Գալիկյանից պահանջվել է մինչև 30.09.2016 թվականը ներկայացնել Նելլի Միքայելյանի դիմումի վերաբերյալ բացատրություն, սակայն փաստաբան Գարիկ Գալիկյանի կողմից բացատրություն չի ներկայացվել:

3. <u>Պալատի եզրահանգումը և որոշումը</u>.

Գտնում եմ, որ Նելլի Միքայելյանի դիմումի, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցի հրապարակման հիման վրա փաստաբան Գարիկ Գալիկյանի նկատմամբ պետք է հարուցել կարգապահական վարույթ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **(այսուհետ նաև Օրենք)** 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Օրենքի 39.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ***<u>փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են</u>***՝ *պետական, տեղական ինքնակառավարման և ոչ պետական մարմինների, ինչպես նաև **<u>այլ անձանց դիմումները</u>** (բողոքները), **<u>ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները:</u>***

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:*

Դիմողն, ըստ էության, փաստաբան Գարիկ Գալիկյանին վերագրում է զանգվածային լրատվության միջոցով, այն է՝ «ATV» հեռուստաընկերության եթերով հեռարձակված «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի ժամանակ հաղորդման մասնակցի հասցեին հրապարակայնորեն **«...*<u>արգանդդ չորանա...</u>*»** արտահայտություն կատարելու վարքագիծը [2]:

Գարիկ Գալիկյանի կողմից նման արտահայտություն կատարելու հանգամանքն առերևույթ հավաստում է նաև Հրապարակման մեջ նշված տեղեկություններից, որտեղ նշվել է. *«Գարիկ Գալիկյանը Hraparak.am-ի հետ զրույցում ասաց, որ եթե անգամ լիցենզիայից էլ փորձեն զրկել, միևնույն է, այդ էժանագին քայլերով չեն կարող իր մարդ տեսակը փոխել. «**<u>Ես այնտեղ նստած եմ եղել որպես փորձագետ, ասել եմ մի մարդու՝ արգանդդ չորանա</u>**, որ այլևս երեխա լույս աշխարհ չբերես ու չկործանես, վեց երեխու կյանք ես կործանել, դրանից հետո էլի՞ պետք ա կործանես: .....»:»*

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագիրք**)

---

[2] «ATV» հեռուստաընկերության եթերով 11.07.2016թ. հեռարձակված «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդման՝ «Խճճված զուգահեռներ» եթեր, 46 րոպե 33 վայրկյան, https://www.youtube.com/watch?v=vuTvWQILNCI:

2.2.3 ենթակետի համաձայն՝ ***Մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:***

Նշված կանոնից հետևում է, որ փաստաբանը մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեության ընթացքում չպետք է կատարի այնպիսի արարք, որը կարող է վնասել փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Կանոնագրքի 1.1 ենթակետը նախանշում է նաև փաստաբանի դերը հասարակության մեջ, մասնավորապես՝ «***<u>Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում:</u>*** *Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: ....*

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

<u>Փաստաբանի գործունեությունը, հետևաբար, իր վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ (երբեմն իրար հակասող)</u>՝

– վստահորդի նկատմամբ;

– դատարանների և այլ իրավապահ մարմինների առաջ, որտեղ փաստաբանը պաշտպանում է գործը և հանդես է գալիս վստահորդի անունից;

– իրավաբանի մասնագիտության հանդեպ ընդհանրապես և այդ ոլորտի յուրաքանչյուր անդամի նկատմամբ մասնավորապես;

– հասարակության նկատմամբ, որի համար ազատ և անկախ մասնագիտության առկայությունը՝ համակցված այդ մասնագիտությանը վերաբերող կանոնների նկատմամբ հարգանքով, Մարդու իրավունքների պաշտպանության կարևոր միջոց է՝ ի նպաստ Հայաստանի Հանրապետության հզորության և հասարակության այլ շահերի:»:

* * *

Սույն որոշմամբ կարգապահական վարույթը հարուցվում է փաստաբան Գարիկ Գալիկյանի նկատմամբ՝ առերևույթ փաստաբանի կարգավիճակում հանդես եկող անձի կողմից հեռուստաթերթերով անձի նկատմամբ «<u>արգանդ չորանա»</u> արտահայտությունը կատարելու վարքագիծը ստուգելու և նշված վարքագծի՝ փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը նպաստելու տեսանկյունից քննարկելու նպատակով:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ Կանոնագրքի 9.1.2 ենթակետի համաձայն՝ *<u>կարգապահական խախտում կատարելու համար կարգապահական տույժի ենթարկվելուց հետո մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկին կատարելը համարվելու է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում</u>, բացառությամբ սույն կանոնագրքի 2.9 կետում նշված դեպքերի:*

Ուստիև, եթե, այդուհանդերձ, Պալատի խորհուրդը կարգապահական գործի քննության ընթացքում գտնի, որ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության, ապա կարգապահական տույժի տեսակը որոշելիս

պարզման ենթակա է նաև այն հանգամանքը, թե արդյո՞ք տվյալ իրավիճակում կիրառման ենթակա է Կանոնագրքի 9.1.2 ենթակետը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ փաստաբան Գարիկ Գալիկյանը Պալատի խորհրդի 03.06.2016թ. թիվ ԿԳ/75-Ա որոշմամբ արդեն իսկ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջների խախտման համար:

Միաժամանակ, հարկ է արձանագրել, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:

Հաշվի առնելով նաև սույն հարցը հանրայնացնելու փաստաբան Գարիկ Գալիկյանի վարքագիծը, գտնում եմ, որ սույն որոշումը պետք է հրապարակել նաև Պալատի կայքէջում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի, 39.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 39.1 հոդվածի 4-րդ մասի, 39.3 հոդվածի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 10-րդ հոդվածի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Փաստաբան Գարիկ Գալիկյանի (արտոնագիր թիվ 644) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ Կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-16210):

2. Նշված կարգապահական վարույթով դիմող ճանաչել քաղաքացի Նելլի Միքայելյանին:

3. Ընդունել ի գիտություն, որ փաստաբան Գարիկ Գալիկյանի նկատմամբ սույն որոշմամբ հարուցվող կարգապահական վարույթը Կանոնագրքում արարքի կրկնակիությունը սահմանող 9-րդ գլխի կանոններով առերևույթ կարող է որակվել որպես ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝

– կարգապահական գործը հինգ օրվա ընթացքում հանձնել հերթական կարգապահական գործ նախապատրաստող փաստաբանին.

– սույն որոշման մեկական օրինակ ուղարկել դիմողին և փաստաբան Գարիկ Գալիկյանին՝ պարզաբանելով նրանց «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39² հոդվածով նախատեսված իրավունքները.

– սույն որոշումը հրապարակել Պալատի կայքէջում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

11 հոկտեմբերի 2016թ.
թիվ 428-Ա/ԿԳ-16210
ք. Երևան